«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ»

ՀԵՂԻՆԱԿ՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/՝ «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ»

ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ՍԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....
3

Գլուխ. 1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը դպրոցում.....**5**

1.2 «Երաժշտություն» առարկայի ազդեցությունը սովորողների արժեհամակարգի զարգացման վրա.....**8**

ԳԼՈՒԽ 2 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ
2.1 «Երաժշտությունը և գրականությունը» թեմայի ուսուցումը 5-րդ դասարանում....**12**
Եզրակացություններ.....
16

Օգտագործված գրականության

ցանկ.....**17**

Ներածություն

Ուսուցման դաստիարակչական ներգործությունն անխուսափելի է, ավելին՝ յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը լուծում է կարևոր ու առանցքային դաստիարակչական խնդիրներ՝ ձևավորելով ազգային ու համամարդկային արժեքներ, վերաբերմունք ու դիրքորոշում աշխարհի, շրջապատի, մարդկանց նկատմամբ: Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի, այլև սեփական կենսափորձի և այլոց կենցափորձի ուսումնասիրության հիման վրա: Աշակերտների արժեհամակարգը ձևավորելու, նրանց բարձր մարդկային որակներով օժտելու լայն հնարավորություններ է ստեղծում նաև երաժշտությունը:

Հանրակրթական դպրոցում ուսումնական գործընթացը չի կարող բնականոն առաջ գնալ, եթե կարևորություն չտրվի աշակերտների դաստիարակության հիմնախնդրին: Ժամանակակից մարտահրավերներով պայմանավորված՝ խնդիրը հաճախ դժվար լուծումներ ու միջամտություններ է պահանջում, այնուամենայնիվ, դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, կառուցողական ու արդյունավետ համագործակցության արդյունքում, կարողանում է համակարգված մոտեցումներ առաջ բերել՝ ամեն կերպ կարևորելով կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող սերունդ: Ուսուցչի ուղղորդմամբ աշակերտը պետք է գա այն գիտակցմանը, որ յուրաքանչյուր ուսումնական առարկա ունակ է իրեն տալ բարձր բարոյական արժեքներ ու մարդկային որակներ:

«Երաժշտություն» առարկայի ուսուցչի վրա ևս մեծ պատասխանատվություն է դրված, քանի որ երաժշտարվեստի մեջ կարելի է գտնել մի շարք հարցերի պատասխաններ, կարելի է սովորողներին առարկայական ու տեսանելի կերպով մատնացույց անել կյանքի գեղագիտական ու գեղեցիկ կողմը, մարդկային պատմության անցած ճանապարհը, որը պատկերված է երաժշտության մեջ:

Այդպիսի օրինակներով հագեցած դասերը կարող են նպաստել վեհ արժեքների ու բարոյական նորմերի ամրապնդմանը սովորողների դաստիարակության ընթացքում:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հաշվի առնելով նոր աշխարհի մարտահրավերները՝ կարծում ենք, որ երաժշտության ուսուցիչը շատ անելիք ունի աշակերտների արժեհամակարգը բարձր մակարդակի վրա դնելու առումով: Նշանավոր կոմպոզիտորների ու երգահանների վաստակը կարող է սովորողների համար դառնալ հայրենասիրության, մարդասիրության, բարոյական բարձր արժեքների ձևավորման օրինակ, ուստի հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորում ենք երժշտության դասին սովորողների մեջ բարձր ու վեհ մարդկային որակներ սերմանելու անհրաժեշտությամբ:

Հետազոտության խնդիրը: Ցույց տալ երժշտության դերը սովորողի կյանքում, ընդգծել առարկայի օգնությամբ սովորողներին ճիշտ ուղղորդելու և արժեքային համակարգ ձևավորելու անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակը:

- Ուսումնասիրել երժշտության միջոցով սովորողների մոտ բարձր արժեքներ դաստիարակելու հնարավորությունները:
- Հիմնվելով մեծանուն հայ կոմպոզիտորների ու երգահանների պատգամների վրա՝ դիտարկել երժշտության արդյունավետությունը՝ որպես սովորողներին դաստիարակելու միջոց:
- Վերլուծել սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորման գործում երժշտության ուսուցչի դերը:

Գլուխ1

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը դպրոցում

Սովորողների կարողունակությունների ձևավորման ու գիտելիքների ընդլայնման կողքին դնում ենք նաև վերջիններիս արժեքային համակարգը: Չափազանց կարևոր է արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ: Զարգացած մշակույթներն ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Հենց այս պատճառով էլ առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ ազատությունները իրենց հետ մեծ վտանգներ են բերում: Ադուհանդերձ, առանց արժեքային համակարգի անհնար է ապրել բնականոն ձևով, պահպանել բարեվարքություն, նույնն ակնկալել դիմացինից, ուստի ուսումնական գործընթացում արժեքային համակարգի ձևավորումը խիստ կարևոր ենք համարում: Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Անձի արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում ինտերիորիզացիայի (ներքնայնացման)՝ հասարակական-քաղաքական, բարոյական, գեղագիտական իդեալների (հասարակական փորձ և մշակույթ) յուրացման միջոցով, որոնք բնորոշ են տվյալ սոցիալական հանրությանը: Կրթութական համակարգի հենքը աշակերտի արժեհամակարգի ձևավորումն է: Չունենալով արժեհամակարգ՝ աշակերտը չի կարող հասկանալ կրթության հարկը, սովորելու, գիտելիք կուտակելու իմաստը: Առանց արժեքային կամ թերի արժեքներով մարդը չի կարող դառնալ հասարակության լիիրավ անդամ, ունենալ նախասիրություններ ու հետաքրքրություններ, բարոյական նկարագիր: Նման մարդը չի կարող պատկերացնել հայրենիքի, ընտանիքի, ծնողի արժեքը: Ըստ էության, երբ խնդիր առաջացավ դաստիարակել մատաղ սերնդին, այդ ժամանակից էլ բարոյական դաստիարկաությունը դարձավ հրատապ և առաջնային:

Պատահական չէ, որ բազմաթիվ գիտագեղարվեստական աշխատություններում, հաճախ «դաստիարկություն» հասկացության փոխարեն օգտագործել են «բարոյական դաստիարկությունը», որի համակարգում էլ ընկալվել են դաստիարկության բազմաթիվ այլ՝ բոլորովին վերջերս առանձնացված խնդիրներ[1]: Երեխան, դեռահասը, պատանին իր կյանքի ձևավորման ամենակարևոր շրջափուլերն անց է կացնում դպրոցում, ուստի դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Կյանքի տարբեր ոլորտների նկատմամբ վերաբերմունքը մարդու մեջ ձևավորվում է նաև կրթության ընթացքում ստացած տեղեկատվության միջոցով: Կրթության սոցիալական ինստիտուտի միջոցով իրականանում է արժեքային մշակույթի փոխանցումը սերնդեսերունդ:

Կարող ենք վստահաբար պնդել, որ աշակերտի արժեհամակարգի հիմնական մասի ձևավորման համար պատասխանատու է դպրոցական միջավայրը, քանի որ այստեղ է տեղի ունենում նաև սովորողի իմացական առաջընթացն ու կարողունակությունների զարգացումը, իսկ դրանք մեծապես կապված են արժեքային համակարգի հետ և փոխլրացնում են միմյանց: Կրթական տարբեր աստիճաններում սովորողն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը: Այս առումով կրկին պետք է առանձնացնել դպրոցի անուղղակի և ուղղորդված ներգործությունը, ինչը միտված են սովորողի արժեհամակարգի զարգացմանը: Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը. հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը,

[1] Ա. Արզումանյան, «Բարոյական դաստիարկության էություն», Երևան,200, էջ 238:

պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը[2]:

Կատարենք եզրահանգում առ այն, որ աշակերտի արժեքային համակարգի հիմքը դրվում է ընտանիքում, ապա կատարելագործվում է դպրոցում: Դասապրոցեսը, դասընկրների հետ շփումներն իրենց ազդեցությունն են թողնում անձի հետաքրքրությունների շրջանակի, դիրքորոշումների, համոզմունքների վրա, ուստի այս տեսանկյունից կարևոր է ուսուցչի ուղղորդումը, լավի ու վատի պատկերավոր ցուցադրումը դասի բովանդակային կառուցվածքի մեջ: Առանձնակի նշանակություն ունի ընտանիքի դերակատարումը: Բարձր բարոյական, մարդասիրական արժեքներով սնվող ընտանիքներում երեխաները կրում են այդ արժեքները, այլոց համար ևս օրինակ դառնում, իսկ հակառակ պարագան իր մեջ մեծագույն վտանգներ է պարունակում, քանի որ այս դեպքում ամեն բան մնում է բացառապես դպրոցի ուսերին: Ռուս մանկավարժ Կոնստանտին Դմիտրևիչ Ուշինսկին դաստիարակությունը բնորոշում է որպես ներդաշնակորեն զարգացած անձնավորության ձևավորմանը նպատակաուղղված գիտակցական պրոցես: Դաստիարակության տարբեր կողմերի շարքում նա գլխավոր տեղը հատկացնում է բարոյականության դաստիարակությանը, որովհետև, ըստ նրա՝ բարոյական դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի մարդասիրություն, ազնվություն և ուղղամտություն, աշխատասիրություն, կաարգապահություն և պատասխանատվության զգացմունք, որը զուգակցվում է համեստության հետ: Դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի ամուր բնավորություն և կամք, տոկունություն, պարտքի զգացմունք [3]: Երեխաների դաստիարակությունը բարդ, պատասխանատու, բայց շնորհակալ և հետաքրքիր զբաղմունք է: Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն է երեխաների ու երիտասարդության գիտակցության ու վարքի, նրանց աշխարհայացքի, արարքների, սովորույթների վրա: Հենց դաստիարակությամբ էլ նշանակալի չափով պայմանավորվում են այն փոփոխությունները, որ կրում է մարդը ծնվելու պահից մինչև հասուն դառնալը[4]:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ դպրոցի դերն անգնահատելի է մատաղ սերնդի մեջ արժեհամակարգի ձևավորման գործընթացում, ինչին յուրաքանչյուր ուսուցիչ պետք է մոտենա ամենայն պատասխանատվությամբ: Եվ այս համատեքստում իրա

---

[2] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 5:
[3] Ушинский К.Д. Педагогические идеи. – М.; 1971.
[4] http://www.hogeban.info/

առանձնակի դերն ունի հենց երաժշտությունը, որն ունակ է զարգացնել սովորողների գեղագիտական կողմը, իմացական և հուզական ոլորտը, ինչու չէ տալ նաև գիտելիքներ երաժշտագետների, ազգային ու համամարդկային գոհարների վերաբերյալ, ինչը նույնպես կարևոր ու նշանակալի դեր ունի անձի համակողմանի զարգացման համար:

1.2 «Երաժշտություն» առարկայի ազդեցությունը սովորողների արժեհամակարգի զարգացման վրա

Դաստիարակությունը հոգեխթանիչ գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում անձի ձևավորման գործում: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական նպատակները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական տարաբնույթ խնդիրներ, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

«Երաժշտություն» ուսումնական առարկայի դասաժամը նույնպես լավ հնարավորություններ է տալիս ուսուցչին դրական ու արժեքավոր սերմեր տալ սովորողին: Այս առարկայի դասերին ուսուցիչը պետք է փորձի համագործակցային հարաբերությունների միջոցով նախ և առաջ ձևավորել ստեղծագործական ու քննադատական մտածողություն, ազգային ու համամարդկային երաժշտական գանձարանի օգնությամբ սովորողներին ցույց տա երաժշտարվեստի կարևորությունը մարդու կյանքում: Երաժշտությունը մարդու հույզերի դրսևորումն է, դրա ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու և վերլուծելու կյանքը, մարդկային հարաբերությունները, մարդկային հասարակության զարգացումն ու արվեստի դերը:

Առարկայի պրակտիկ ուղղվածությունը ձևավորում է ստացված գիտելիքներն ու հմտությունները Կիրառելու հնարավորություն, զարգացնում է երաժշտական

ընդունակությունները, որստի և առարկայի դասավանդման շրջանակներում դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի՝ գաղափարի օգտագործման վրա: Ուսուցչի դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների լայնույթը շատ առումներով կապահովեն ուսուցչի դաստիարակչական աշխատանքի հաջողությունը:

Մեր բազմադարյան պատմության կենսափորձը, մեր երգարվեստի ազնիվ, հայրենասիրական ու մարդասիրական մղումները, որոնք արտացոլվել են մեր երգերում, միշտ էլ ունեցել են դաստիարակչական նշանակություն: Հայ երաժշտարվեստում բազմաթիվ են այնպիսի դրվագները, որոնք սովորողներին մտածելու ու խորհելու առիթ կտան:

Երաժշտությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, արտացոլում և պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները: Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, սերունդների միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու ինքն իրեն և մյուսներին հասկանալու համար: Իսկ առօրյա կյանքում երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, բացահայտում է նրա վերաբերմունքը շրջակա աշխարհի նկատմամբ, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել, աշխատել և արարել: Ըստ ռուս երաժշտագետ Բ. Ասաֆևի՝ «Երաժշտությունը իրականության կերպարահնչյունային արտացոլումն է», նրանում հնչում է կենդանի խոսք՝ հուզված կամ հանգիստ զրույց, դիմում, կոչ, հարց ու պատասխան:

Մարդկության զարգացման հետ մեկտեղ երաժշտությունը ձեռք է բերել հատուկ նշանակություն, երբ խոսք է գնում անհատի հոգեկան աշխարհի կամ մի ամբողջ մշակույթի մասին, երաժշտությունը հանդես է գալիս որպես այդ մշակույթը բնութագրող, բացահայտող և ներկայացնող խորհրդանիշ: Երաժշտության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն մարդու զգայարանների վրա թողնում է անմիջական և ուժեղ ազդեցություն:

Ահա թե ինչպես է արտահայտվել երաժշտության ազդեցության մասին մեծ Կոմիտասը.

«Մեկ հասկացված, անկեղծ ձայն հազար ճառ կարժե, որովհետև ճառը պետք է մարսե հասարակությունը, որ կարենա անկե սնունդ առնել, ինչ-որ ժամանակներու գործ է: Իսկ ձայնը վայրկյանին մեջ կթափանցե մարդու կուրծքեն ներս և այնտեղ կհիմնե զգացման և մտքի վառարան»:

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև անհատի ձևավորման և զարգացման վրա տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական որակներով: Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ուղղված է այն կարողունակությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ, անհատական մոտիվացիայով սովորող, որը ընդունակ է ինքնակրթվել և ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրությունը բարձրակարգ երաժշտության և ընդհանրապես արվեստի նկատմամբ: Այն նպաստում է նաև սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը: Խոսելով ընդհանուր սովորողների մտահորիզոնի ընդլայնման և արժեքային համակարգի ձևավորման մասին պետք է հաշվի առնել նաև այն, որ այս գործում իր միանգամայն ու կարևորագույն դերը ունի մեր ազգային մշակույթը[5]:

Ազգային մշակույթ ասելով՝ հասկանում ենք արժեքների այնպիսի համակարգ, որը բնորոշ է կոնկրետ ազգի, ստեղծվել է այդ ազգի մշակութային համակարգում: Իսկ ազգի մշակույթը դիտարկելիս ի նկատի ունենք հատկապես այն արժեքների ամբողջությունը, որոնք ժամանակին, մշակութային փոխառնչակցությունների միջոցով վերցրել է կոնկրետ ազգը և դարերի ընթացքում հանդես բերել սեփական մոտեցումներով: Ազգային երգը, ազգային մշակույթի արժեքների համակարգում

[5]https://escs.am/files/files/2020-07-15/b04481dd1f12fd897c9c52b7561969d4.pdf «Երաժշտություն»: Առարկայի չափորոշիչ և ծրագիր:

գրավելով իր կարևորագույն տեղերից մեկը, իր վրա է կրում ազգային գենետիկ կոդը, առաքելությունը, ազգային լեզվամտածողությունը, կեցությունը, ներքին հոգեկան զգացումի արտահայտության ձևը և այլն: Կոմիտասը փայլուն գիտեր ազգային երգի արժեքը, նա գիտեր՝ ինչ երգեր է գրառում և թողնում սերունդներին: Այդ պատճառով էլ հենց նրա գրառած երգերն ընտրեցի կատարման ու տարածման համար: Ազգային երգը, բացի Կոմիտասից, մեր երգահաններից գրառել են Քրիստափոր Կարա-Մուրզան, Սպիրիդոն Մելիքյանը, Մակար Եկմալյանը և այլք: Իսկ ո՞րն էր Կոմիտասի արժեքը և յուրահատկությունն այդ գործում: Տիգրան Մանսուրյանը հայ ազգային երգերի, պարեղանակների Կոմիտասի գրառումները շատ պատկերավոր համեմատում էր թիթեռի թռիչքը թղթի վրա զետեղելու հետ:

«Երաժշտություն» առարկան հանրակրթական դպրոցում դիտվում է որպես արվեստի դասվանդման միջոց, որի հիմքում ազգային և համամարդկային երաժշտությունն է: Այն կրթության և դաստիարակության բնագավռի կարևորագույն բաղադրամասերից մեկն է, առանց որի թերի կլինի ժամանակակից մարդու մտավոր և հոգևոր զարգացումը:

Երաժշտական դաստիարակությունը նպաստում է ոչ միայն անհատի ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանն ու դրսևորմանը,այլև անցյալի գեղարվեստական փորձի, ազգային ու համամարդկային մշակութային արժեքային յուրացմանն ու հաջորդ սերնդին փոխանցմանը: Երաժշտությունը սովորողների մեջ արմատավորում է բարձրագույն արժեքներ արժեքային համակարգեր՝ մարդկային լավագույն հատկանիշներ, մարդասիրական զգացումներ, բարոյահոգեբանական նկարագիր, գեղագիտական աշխարհայացք, ազգային արժանապատվության խորը գիտակցում և հայրենասիրություն:

ԳԼՈՒԽ 2 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

2.1 «Երաժշտությունը և գրականությունը» թեմայի ուսուցումը 5-րդ դասարանում

Դիտարկենք «Երաժշտություն» առարկայի շրջանակներում ԿՁՈՒ դասի օրինակ, որի շրջանակներում նպատակ ենք դրել սովորողների մեջ ձևավորել նաև բարձր արժեքային համակարգ: Ընտրել ենք 5-րդ դասարանի «Երաժշտություն» առարկայից ծրագրային նյութ՝ «Երաժշտությունը և գրականությունը»:

Դասի թեման	՝ «Երաժշտությունը և գրականությունը»

Դասի տիպը	Ամփոփման, գիտելիքների համակարգման դաս
Միջառարկայական կապեր	• «Հայ գրականություն» • «ԹԳՀԳ»
Դասին կիրառվող մեթոդներ	• «Քառաբաժան» • «Խճանկար» • «Խմբային քննարկումների մեթոդ»
Ակնկալվող կարողունակություններ	• Սովորել սովորելու կարողունակություն • Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն • Լեզվական գրագիտություն և կարողունակություն
Վերջնարդյունքներ	• Ունկնդրի և արժևորի տարբեր ժանրերի, երաժշտական ուղղությունների ստեղծագործությունները: • Թվարկի երաժշտական ստեղծագործությունների ոճային առանձնահատկությունները: • Հաղորդակցվի և ինքնաարտահայտվի ազգային և համաշխարհային երաժշտության միջոցով, համադրելով երաժշտական կերպարների յուրօրինակությունը: • Ներկայացնի նույն երաժշտական գաղափարի մեկնաբանությունների առանձնահատկությունները տարբեր կոմպոզիտորների կողմից:
Դասի նպատակները	**1.** Ձևավորել և զարգացնել սովորողների 21-րդ դարի հմտությունները:

	2. Նպաստել սովորողների մոտ գեղագիտական ճաշակի, երաժշտական հմտությունների զարգացմանը: **3.** Խրախրուսել և ոգևորել սովորողներին դեպի երաժշտությունը, ձևավորել հետաքրքրություն արվեստի այս ճյուղի նկատմամբ: **4.** Խրախուսել ու մոտիվացնել սովորողներին, ձևավորել արժեքային համակարգ: **5.** Զարգացնել վերլուծելու, համեմատելու, համադրելու հմտությունները:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Ուսուցիչը թեման ամփոփելու համար կկիրառի «Խճանկար» փոխգործուն մեթոդը: Սովորողները կբաժանվեն 4 խմբի, և յուրաքանչյուր խումբ կդառնա որևէ ենթաթեմայի հետազոտող: Աշխատանքի ավարտին բոլոր խմբերը կներկայացնեն իրենց աշխատանքը, կկատարեն փոխուսուցում: Աշխատանքն իրականացնելիս սովորողներին հնարավորություն կտրվի օգտվել նաև համացանցից:

Մեթոդի առանձնահատկությունն այն է, որ սովորողները մեծ պատասխանատվություն կկրեն միմյանց ուսումնառության համար՝ միաժամանակ հանդես գալով և' սովորողի, և' սովորեցնողի դերում՝ արդյունքում կզարգանա նաև վերջիններիս սովորել սովորելու կարողունակությունը, ճանաչողությունը, թիմում աշխատելու հմտությունները: Համագործակցային ուսուցումը թույլ կտա, որ բոլոր սովորողները համաչափ մասնակցեն դասին, մինչդեռ ավանդական ուսուցման մեթոդներն այդ հնարավորությունը չեն տալիս:

Առաջադրանքի օրինակ

Խմբերը կներկայացնեն իրենց աշխատանքները, հնարավորություն կունենան նաև փոխադարձ հարցադրումներ հղելու:

Որպեսզի սովորողների մեջ առավել տպավորվի երաժշտություն-գրականություն միջառարկայական կապը, վերջիններս կարողանան վերաբերմունք արտահայտել, կկիրառվի խմբային քննարկումների մեթոդը: Սովորողներին օգնելու նպատակով կցուցադրվի նախօրոք պատրաստած սահիկաշարը:



Դասը կամփոփվի «Քառաբաժան» մեթոդի կիրառությամբ: Յուրաքանչյուր շարք իր համար կնախապատրաստի թուղթ, որի վրա կպատկերի հետևյալ աղյուսակը՝

Ի՞նչ գիտեինք	**Ի՞նչն ենք կարևորում**
Ի՞նչ իմացանք	**Ի՞նչ հասկացանք**

Այսպիսով, հաջորդ դասի հարցման ընթացքում պարզ դարձավ, որ սովորողների գերակշիռ մասը կարողանում է դասի հիմնական հասկացությունները մեկնաբանել,խոսքը կշռադատված է, չկա մեխանիկական վերարտադրություն, կարողանում են գեղեցիկ երգել: Կարծում ենք, որ այն վերջնարդյունքը, որն ակնկալում էինք ունենալ, ստացանք, քանի որ կարողացանք ապահովել սովորողների համաչափ մասնակցությունը դասին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն հետազոտության արդյունքում եկանք այն եզրահանգմանը, որ ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի մոտեցումներից, սեփական պարտականությունները գիտակցելուց և պատշաչ կատարումից: Երաժշտության ուսուցիչը պետք է ուղղորդի սովորողին, որպեսզի վերջինս ճիշտ կողմնորոշվի, որևէ կերպ չպետք է պարտադրել սովորողին սեփական կարծիքը, հարկավոր է ամեն կերպ խթանել վերջինիս ինքնուրույնությունն ու քննադատական մտածողությունը

Որպեսզի ուսուցիչը կարողանա գրանցել հաջողություններ աշակերտներին կրթելու և դաստիարակելու գործընթացում, պետք է անդադար կատարելագործի իր մանկավարժական հմտությունները, կիրառի նոր մեթոդական հնարներ, վստահելի հարաբերություններ ձևավորի սովորողների հետ:

Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է ուսուցման նպատակների մեջ անպայման կիրառի ժողովրդավարական սկզբունքներ, պահպանի բարոյահոգեբանական կայուն միջավայր: Սովորողի համար պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարևոր կզգա և բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման համար: Հետադարձ կապը պետք է ուսուցչի համար դառնա ուսումնական գրծընթացը մշտադիտարկելու և համակարգելու գործիք:

Հարկավոր է գիտակցել աշակերտի մեջ բարձր մարդկային որակներ՝ արդարամտություն, ազնվություն, մարդասիրություն գտնելուն և ձևավորելու կարևորությունը, որոնց հասնելու ճանապարհին, վստահաբար, շատ կօգնի նաև երաժշտությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Արզումանյան, «Բարոյական դաստիարկության էություն», Երևան,2000
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
3. https://escs.am/files/files/2020-07-15/b04481dd1f12fd897c9c52b7561969d4.pdf «Երաժշտություն»: Առարկայի չափորոշիչ և ծրագիր:
4. Ушинский К.Д. Педагогические идеи. – М.; 1971.
5. http://www.hogeban.info/
6. https://escs.am/files/files/2020-07-15/b04481dd1f12fd897c9c52b7561969d4.pdf «Երաժշտություն»: Առարկայի չափորոշիչ և ծրագիր: